«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1919-1921
ԱՌԱՐԿԱ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ ԿԱՐԵՆ ԳԵՈՐԳՅԱՆ
ՄԱՐԶ ՇԻՐԱԿԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<ՀԱՅԿԱԶՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն.....3
Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունը /գլուխ1/.....4
Գարեգին Նժդեհի գործունեությունը 1919_1921թթ /գլուխ 2/.....9
Եզրակացություն.....19
Օգտագործված գրականությունը.....21

Ներածություն

Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ. հունվարի 1-ին Նախիջևանի Կզնութ գյուղում, քահանայի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Նախիջևանում, ապա ավարտել է Թիֆլիսի ռուսական միջնակարգ դպրոցը: Այստեղից մեկնել է Սանկտ Պետերբուրգ, ընդունվել ռուսական համալսարանի իրավաբանական բաժինը, սովորել երկու տարի: 1904-1907թթ. սովորել ու ավարտել է Սոֆիայի (Բուլղարիա) թագավորական բարձրագույն ռազմական ուսումնարանը, որտեղ դասավանդում էին ականավոր զորավարներ: Նժդեհը մեկնել է Պարսկաստան, Սալմաստ, 1909թ. անցել Կովկաս, սակայն այստեղ ձերբակալվել է, պահվել Երևանի և Նախիջևանի բանտերում երկու տարի: 1912թ. զորավար Անդրանիկի հետ Բուլղարիայում կազմավորել են երեք հարյուր հոգուց բաղկացած կամավորական զորախումբ և մասնակցել Թուրքիայի դեմ մղվող Բալկանյան պատերազմին, որտեղ ցուցաբերեցին խիզախություն և հերոսություն:

Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը: Անդրանիկը և Նժդեհը 1914թ. հոկտեմբերին վերադարձան Թիֆլիս մասնակցելու հայ կամավորական շարժմանը: Նժդեհը նշանակվում է գնդի հրամանատար՝ Դրոյի տեղակալ: Կամավորական գնդերը մեկնեցին ռազմաճակատ թուրքերի դեմ Իգդիրի, Ջուլֆայի, Սարիղամիշի, Բաթումի, Վանի, Կարին, Էրզրումի ուղղություններով: Ռազմաճակատում Դրոն վիրավորվեց: Նժդեհը ստանձնեց գնդի հրամանատարությունը և իր զինակիցներով անցավ Երևան, այնտեղից Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսայի ուղղությամբ նահանջող զորամասերին ոգեկոչել է և անցել հակահարձակման թուրքերի դեմ Թուրքական զորամասերը խուճապահար նահանջել են:

Գլուխ առաջին

Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունը

Հայ մեծ հայրենապաշտ ու ազգասեր հերոս, ով, անգամ իր մահվանից հետո, շարունակում է իր հաջորդ սերունդներին փոխանցել հոգու վեհությունն ու հզորությունը: Անգամ այն ժամանակ, երբ նրա աճյունը երկու մաս է եղած՝ մեկը Աշտարակի Սպիտակավոր եկեղեցու բակում, մյուսը իր հանգրվանը գտած Սյունիքում՝ Խուստուփ լեռան լանջին, նա շարունակում է իր հող դարձած մարմնով և իր անմահ մնացած ոգով սատար կանգնել հայրենի հողին՝ Մայր Հայաստանին:

Բազում քաջագործություններից ու հերոսական սխրանքներից հետո, անգամ, մեծ հայորդին պնդում էր, որ.

Գարեգին Նժդեհը լայն հանրությանը հայտնի է առաջին հերթին որպես զորավար ու պետական գործիչ, իսկ որպես մտածող՝ սոսկ հատվածաբար ներկայացվող իր խորիմաստ ու սեղմ ասույթներով: Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն ներմուծվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր պատմաստեղծ կյանքով, հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը: Նժդեհը (Գարեգին Տեր հարությունյան) ծնվել է 1886թ.-ի հունվարի 1-ին, Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում: Սկզբնական կրթությունը ստանալով Նախիջևան քաղաքի ռուսական դպրոցում, ուսումը շարունակում է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, որտեղ սովորելու ընթացքում էլ, 17 տարեկան հասակից, միանում է հայ ազգագրական շարժմանը: 1906թ.-ին անցնում է Բուլղարիա, որտեղ մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարների միջնորդությամբ ընդունվում է Սոֆիայի սպայական դպրոցը և այն հաջողությամբ ավարտելով՝ 1907թ.-ին վերադառնում է Կովկաս[1]:

---

[1]Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921թվականի Թավրիզի դատը, Ե., 2004, էջ 211-212:

1907-1908թթ. մտնում է Հ.Յ.Դ. շարքերը և մասնակցություն ցուցաբերում պարսկական հեղափոխական շարժմանը: Զենք և ռազմամթերք տեղափոխելու համար, Նժդեհը 1909թ.-ին վերադառնում է Կովկաս, սակայն այստեղ նա ձերբակալվում է ցարական իշխանությունների կողմից: Բանտերում մնալով ավելի քան երեք տարի, տեղափոխվում է Բուլղարիա:

1912թ.-ին, երբ սկսվեց բալկանյան առաջին պատերազմը, հայերը Թուքիայի դեմ կռվելու համար բուլղարական բանակի կողքին ստեղծեցին կամավորական վաշտ, որի ղեկավարները եղան Նժդեհն ու Անդրանիկը:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին, «ներման արժանանալով ցարական կառավարության կողմից, Նժդեհը վերադառնում է Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով»:

1918թ.-ի գարնանը վարում է Անիի շրջակայքում մղվող կռիվները և նահանջող հայկական զորամասերի հետ ապահովում Նիկողայոս Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունների փոխադրումը Անիից:

Նժդեհը չէր սխալվում, երբ փրկության ելքը տեսնում էր ռազմաճակատում...

Մոտենում էր 1918թ.-ի մայիսը, վճռվում էր հայոց ճակատագիրը: Ալեքսանդրապոլում կռվի բռնվելով թուրքական զորքերի դեմ , Նժդեհը իր խմբով նահանջում է Ղարաքիլիսա: Այստեղ էին նահանջել խուճապի մատնված բազմահազար հայ փախստականներ. տեղի ժողովուրդը նույնպես տագնապի մեջ էր: Ահա՛ այս օրահասական պահին, երբ տիրում էր համատարած հուսալքում, լսվում է Նժդեհի ռազմաշունչ ձայնը. Դիլիջանի եկեղեցու բակում նրա արտասանած ճառը հոգեփոխեց հուսալքված բայց ոգեշունչ խոսքի կարոտ հայերին և նրանց առաջնորդեց դեպի սրբազան ճակատամարտ: «Դեպի՛ ճակատ, այնտե՛ղ է մեր փրկությունը»,- հնչում է Նժդեհի վճռական և ինքնավստահ ձայնը: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականով՝ հայությունը հաստատեց իր հարատևելու կամքը և, այդ հավաքական կամքի զորացման գործում, անշուշտ, անուրանալի է Նժդեհի դերը[2]:

Նա չէր սխալվում նաև այն ժամանակ, երբ հնարավորին բոլոր ուժերը հավաքած Զանգեզուրում կենաց ու մահու կռիվ էր մղում մեկ թուրքադրբեջանական, մեկ էլ խորհրդային բանակի դեմ: 1920 թվականի օգոստոսին, ՀՀ զինվորական նախագահ Ռուբեն Տեր Մինասյանը, համաձայն բոլշևիկների հետ կնքված զինադադարի (1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Բորիս Լեգրանի ու Արշակ Ջամալյանի միջև կնքված համաձայնագիրը, որով ՀՀ- համաձայնություն էր տալիս Կարմիր բանակի մուտքին Զանգեզուր, Ղարաբաղ և Նախիջևան), Դրոյի միջոցով հեռագրում էր Նժդեհին՝ թողնել Կապանն ու անցնել Երևան: Բայց Նժդեհը, չընդունելով ՀՀ զինվորական նախարարի՝ Զանգեզուրը թողնելու հրամանը, և մերժելով Դրոյի առաջարկը՝ անցնել Երևան բուժվելու (Գորիսի ձորում վիրավորվել էր), նախընտրեց մնալ Սյունիքում և մենակ չթողնել լեռնահայությանը: Այդ ծանր օրերին էր, որ Նժդեհը հղացավ և գործի դրեց Դավիթբեկյան Ուխտերը: 1920թ. օգոստոսի 25-ին, Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Նժդեհի զինվորները ուխտեցին Դավիթ Բեկի անունով՝ հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատությանը, իրենց հրամանատար Նժդեհին և կռվել մինչև վերջին շունչը: Նժդեհը ձգտում էր անկախ պետականության կազմակրպմանը: Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու զորությանը, Սյունիքի հայությունը, Նժդեհի ղեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազնամարտը: Այսուհանդերձ Գարեգինը լավ էր գիտակցում տարածաշրջանում ձևավորված խորհրդայնացման մթնոլորտը: Առողջ դատելով ստեղծված իրադրությունը նա տեղի տվեց և չցանկանալով հեղել անմեղ հայության արյունը համաձայնեց Զանգեզուրի խորհրդայնացմանը, սակայն մի պայմանով, որ այն մնալու էր Խորհրդային Հայաստանի կազմում[3]:

---

[2]Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Գարեգին Նժդեհ, Գրական երկեր, հատոր առաջին, Ե., 2002:

Նժդեհը շատ անգամ է խոսք ուղղել բազմությանը, մասնավորապես մարտական ուժերին, բայց Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրեին արտասանած ճառով ինքն իրեն գերազանցեց: (գլխապետ Արտ. Հարությունյան): Ղարաքիլիսայի և Սարդարապատի ռազմաճակատում Նժդեհը դարձավ պատմական դեմք:

1918թ. նոյեմբերին Նժդեհը նշանակվել է Նախիջևանի գավառապետ: 1918թ. Ղարաբաղում և Զանգեզուրի սահմաններում կռիվներ էր մղվում: Զորավար Անդրանիկը Զանգեզուր է գալիս 1918թ. ամռանը: Զանգեզուրի գյուղացիությունը ոգևորվեց և ամուր կանգնեց Անդրանիկի թիկունքին: Անդրանիկը մաքրեց վտանգավոր թուրքաբնակ գյուղերը, ապահովեց շրջանների միասնական պայքարը և հասավ Զաբուղ, մոտեցավ Շուշի քաղաքին:

Շուշի քաղաքի գրավումը ժամերի խնդիր էր ու թաթար-տաջիկ հարուստ վաճառականները գլխակորույս փախչում էին դեպի Աղդամ, Բաքու:

Զաբուղ են հասնում անգլիական հրամանատարական ներկայացուցիչները և նենգաբար խաբելով Անդրանիկին կանգնեցնում արշավանքը: Իբրև թե հայկական դատը միջազգային սեղանի վրա է, վեհաժողովում լավ արդյունքով պիտի լուծվի, եթե շարունակվի կռիվը, դրությունը կփոխվի (Նժդեհ, վկայություններ Ռուբեն Նարինյան, էջ 472):

Մի խումբ սպաներ ուղարկվում են Զանգեզուր: Գնդապետ Արսեն Շահմազյանը նշանակվել էր Զանգեզուրի նահանգապետ և զորքերի հրամանատար, 1919թ. մարտին գալիս է Զանգեզուր, Անդրանիկից ընդունում ընդհանուր հրամանատարությունը և մեծ հարգանքով ճանապարհում Երևան: 1919թ. օգոստոսին Զանգեզուր է գալիս փոխգնդապետ Նժդեհը որպես Կապանի, Արևիքի(Մեղրի) Գողթանի զորքերի հրամանատար (Կապարգողթ): Նժդեհը և Գողթանի գավառապետ Աշոտ Մելիքի Մուսյանը խորհրդակցում են գնդապետ

[3] Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921թվականի Թավրիզի դատը, Ե., 2004թ., էջ 211-212

Շահմազյանի հետ: Զանգեզուրի պաշտպանությունը բաժանում են երեք շրջանների՝ Կապան, Արևիք, Գողթան՝ Կապարգողթի ռազմաճակատ՝ Նժդեհի հրամանատարությամբ: Նժդեհը իր զորակայանշտաբը հաստատում է Կապանի հանքերում[4]:

1918թ. սկսած ազերի թուրքերը ավելի սանձարձակ են գործում: Զանգեզուրի համար ստեղծվել էր ծանր ու անտանելի վիճակ: Թաթար անվանվող ադրբեջանական թուրքերը վնասներ էին հասցնում հայերին, փակում ճանապարհները, հրահրում կռիվներ, վայրենաբար հարձակումներ կատարում, սպանություններն ու կողոպուտը, մեծ քանակությամբ անասունների գողությունը, թալանը դարձել էր ամենօրյա:

[4] Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Գարեգին Նժդեհ, Գրական Երկեր, հատոր առաջին, Ե., 2002:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Գարեգին Նժդեհի գործունեությունը 1919-1921թթ

1918թ. օգոստոսին Զանգեզուրի լիազոր Ս. Ստեփանյանը զանգեզուրցիներին կոչ էր արել. «Կազմակերպենք մեր սեփական զորքն ու զինված խմբերը, դա է մեր փրկության միակ ճանապահը»: Սկսվել էր ստեղծվել ինքնապաշտպանության վաշտեր, որի կազմակերպիչներն էին Կապանի Ագարակ գյուղից փոխգնդապետ Սմբատ Թորոսյանը, Վ. Խոտանանցի տեղակալ Հովհաննեսս Տեր Պետրոսյանը, մեղրեցի փոխգնդապետ Միքայել Մելիք Օհանջանյանը և այլոք:

1919թ. նոյեմբերին Նժդեհը հարձակվում է և ոչնչացնում է Օխչի Զորում դարանակալված թուրքական վաշտերին:

1919թ. դեկտեմբերի 1-ին, կես գիշերվա ժամը 12-ին սկսվեց հարձակումը Գեղվաձորի վրա, դեկտեմբերի 7-ին թշնամին ջախջախված փախուստի դիմեց:

Գեղվաձորում և Օխչի Զորում Նժդեհի տարած հաղթանակը մեծ նշանակություն ուներ: Գեղվաձորի թուրքերը կապ էին պահում Նախիջևանի, Օրդուբադի, Զաբրահիլի, Հաջի Ամլուի թուրքերի հետ: Գեղվաձորի թուրք բնակչությունը վտանգ էր ներկայացնում Զանգեզուրի համար: Մեկ տարի առաջ 1918թ.-ին Գեղվաձորի թուրքերը մեկ օրվա մեջ զազանաբար սպանել էին 2000 հայ անզեն փախստականների: 1919թ. նոյեմբերին թուրքական 2 վաշտ Օրդուբադից եկել և տեղակայվել էին Օխչի Զորում, Օխչի ձորը հայտարարել Ադրբեջանի անբաժան մաս:

Նժդեհի Բաղաբերդի ու Մեղրու ջոկատները մեկ գիշերում գրոհեցին ու լիովին ոչնչացրին թուրքական վաշտերի ասկյարներին:

Անկախ բևեռացված հայ հասարակության կողմից առաջ քաշված Գ. Նժդեհի ռազմաքաղաքական գործունեության ու գաղափարախոսության հակոտնյա գնահատականներից՝ նա մեր նորագույն պատմության մեծագույն դեմքերից է: Իրավամբ, հայ պատմագրությա մեջ, հայտնի գործիչների և նաև տեղացիների հուշագրություններում առավելապես կարևորվում և ներկայացվում է Նժդեհի՝ 1919թ. աշնանից մինչև 1921թ. հուլիս ամիսը ընկած ժամանակահատվածի գործունեությունը, որը նրա կյանքի աստեղային ժամն էր, երբ սկզբում որպես Կապարգողթի՝ ԿապանԱրևիքԳողթանի հայկական ուժերի

հրամանատարն էր, իսկ 1920թ. աշնանից՝ նաև ամբողջ Զանգեզուրի փաստացի ղեկավարը:

Սակայն, չգիտես ինչու, անտեսվում, կամ քիչ ուշադրության են արժանանում 1921թ. փետրվարի վերջից մինչև մարտի կեսերը Վայոց Ձոր և Նոր Բայազետ նրա ուղևորությունն ու գործունեությունը, թեպետ այդ մասին քիչ չեն ժամանակակիցների թողած հուշերը, այդ թվում հենց իր «Ազատ Սյունիքը» և այլ[5]:

Չնայած իր կարճատև այցելությանը՝ Գ. Նժդեհը մշտապես մնաց վայոցձորցիների հիշողության, նրանց զրույցների մեջ և՛ դրական, և՛ բացասական արժևորմամբ:

Մինչև Լեռնահայաստանի զինական ուժերի և նրանց միացած տեղացի զինական խմբերի կողմից Վայոց Ձորի գրավմանն ու Գ. Նժդեհի՝ Վայոց ձոր այցելությանն անրադառնալը հարկ է հիշատակել, որ գրեթե 4 տարի Վայոց Ձորը միակ կենարար երակն էր մնացել ինչպես Զանգեզուրի, այնպես էլ Ղարաբաղի ու Գողթանի հայության համար: Հիշենք, որ սկզբում Օսմայան Թուրքիայի, ապա՝ Անգլիայի, իսկ հետագայում՝ Բոլշևիկյան Ռուսաստանի ճնշման տակ Հայաստանի հանրապետությունը, չկարողանալով դե յուրե իրեն միացնել Զանգեզուրն ու Ղարաբաղը, չէր կարողանում բացահայտ զինական ու այլ կարգի օգնություն ցույց տալ հայկական այդ երկրամասերին:

Վայոց Ձորի միջոցով կենտրոնի և Զանգեզուր-Ղարաբաղի հայության հետ կապի, ռազմատնտեսական մատակարարումների շնորհիվ հնարավոր դարձավ կազմակերպել Սյունիքի հայության գոյապայքարը՝ 1918-1919թթ. Անդրանիկի, Արսեն Շահմազյանի, Պողոս Տեր Դավթյանի, իսկ՝ 1919-1921թթ. ՝ Գ.Նժդեհի ու Պողոս Տեր Դավթյանի գլխավորությամբ:

Դա բարձր է գնահատել հենց Գարեգին Նժդեհը՝ հատուկ այդ գործի կազմակերպման համար Վայոց Ձոր ուղարկված Եղիշե Իշխանյանի մասին խոսելիս. «Անցնում եմ Քեշիշքենդով: Այստեղ է Վայոց Ձորի Փրկության կոմիտեի նախագահ Եղիշե Իշխանյանը, որը մեր զորքերի պարենավորման և մեզ ռազմամթերք հասցնելու գործում կատարել է եզակի դեր»[6]:

---

[5] Овсепян Ваче, Гарегин Нжде и КГБ. Воспоминания разведчика.- Ер., НОФ «Нораванк», 2007

Իսկ Ե. Իշխանյանը գրում է. «Վայոց Ձորը, լինելով Սյունիքն ու Արարատյան նահանգը կապող օղակը, գերմարդկային ճիգեր է թափել շարունակ Զանգեզուրին օգնություն հասցնելու: Երբ անհրաժեշտ է եղել ռազմամթերք տեղափոխել Ղարանլուխից Քեշիշքենդ ձմեռվա խստաշունչ եղանակին, հարյուրավոր վայոցձորցիներ իրենց մեջքով են կրել՝ խոր ձյան միջով 55 վերստ ճամփա կտրելով: Մեծ թվով անասուններ են ցրտահար եղել Սելիմի և Արխաշանի լեռնանցքներում»:

Թեպետ Նժդեհը, Ե. Իշխանյանը և ուրիշներ, անձնական հակակրանքի և այլ դրդապատճառներից ելնելով, չեն հիշատակում, սակայն այդ գործում գլխավոր դերը խաղաց Վայոց Ձորի հայկական զինական ուժերի հրամանատար Յապոնը՝ Հովհաննես Պարոնյանը: Դեռ 1917թ. ամռանից ուղարկվելով Վայոց Ձոր՝ սկզբում որպես Դարալագյազի միլիցիոն զորքերի, այնուհետև վերակազմավորված պարտիզանական զորքերի հրամանատար՝ Յապոնը կարողացավ երկարտև, համառ ու հաղթական կռիվներով, իսկ հարկ եղած դեպքում՝ նուրբ դիվանագիտությամբ մաքրել Երևանից Վայոց Ձոր և դեպի Զանգեզուր ձգվող ճանապարհներն ու ուղիները պարբերաբար փակող ավազակաբների վերածված, 100-ի հասնող թուրքական բնակավայրերը և ապահովել կենտրոնի հետ Զանգեզուրի կապը:

Այստեղ չի կարելի շրջանցել 1921թ. Փետրյվարյան ապստամբությանը ոչ միայն նրա համար, որ Գ. Նժդեհի ժամանումը Վայոց Ձոր և այնուհետև Ն. Բայազետ անմիջականորեն կապված էր այդ իրադարձություններին, այլև որ ապստամբության ծրագրման գործում առանցքային է եղել Գ.Նժդեհի ունեցած դերակատարությունը, որը տարբեր նկատառումներով ուսումնասիրողների կողմից կարծես անտեսվում է:

Թերևս այստեղ ինչ-ինչ փոխպայմանավորվարծություն է եղել, կամ ավելի ճիշտ՝ գոյություն է ունեցել ՀՅԴ ղեկավար մարմնի որոշում՝ ապսամբության ծրագրումն ու նախնական կազմակերպչական աշխատանքները գաղտնի պահելու մասին: Ըստ որի էլ՝ գրեթե բոլորը՝ ՀՀ վերջին վարչապետ և Հայաստանի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը, ակտիվ դերակատարներ՝

---

[6] Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921թվականի Թավրիզի դատը, Ե., 2004թ., էջ 211-212

Կարո Սասունին, Եփրեմ Սարգսյանը, Զաքար Յոլյանը, Իրազեկը, գավառների գործիչներ՝ Արսեն Խաչիկյանը, Գրիգոր Մխիթարյանը և այլք, հատուկ շեշտում էին, որ Հայաստանի տարբեր շրջաններ ապստամբական ոչ մի կապ չեն ունեցել միմյանց հետ: Այս առիթով Գրիգոր Մխիթարյանը գրում է. «Ավելորդ է ասել, որ Դարալագյազի շարժումը ոչ մի կապ չի ունեցել Երևանի Փետրվարյան շարժման հետ: Դարալագյազում ոչ ոք ոչինչ չգիտեր, թե ինչ է կատարվում Երևանում»: Յապոնը ևս այդ է վկայում. «Մեր ուրախությունն ավելացավ այն բանով,, որ իմացանք, որ Դարալագյազի գրավումը զուգադիպած էր ամբողջ Հայաստանի Փետրվարյան հաջող ապստամբությանը: Հայ աշխարհը իր հաղթանակի օրն էր տոնում»: Արսեն Խաչիկյանը նույն ոգով գրում է. «Ապստամբությունը Նոր Բայազետում սկսվեց փետրվարի 20-ին՝ մոտ ժամը 4-ին, միանգամայն ինքնաբուխ՝ առանց որևէ կապ ունենալու Երևանի և առհասարակ մի որևէ ուրիշ շրջանի հետ: Ապստամությունը Բասարգեչարում սկսվել էր փետրվարի 16-ին, չորս օր առաջ՝ Նոր Բայազետից՝ դարձյալ միանգամայն ինքնաբուխ և առանց որևէ կապ ունենալու Երևանի հետ»[7]:

Կարծում ենք, որ ապստամբության սկզբնական կազմակերպիչ Խմբապետ Մսրտիրոսի կողմից գլխավոր հրամանատարի տեղը վերջին պահին Կուռոյին՝ Սուրեն Թարխանյանին զիջելը ևս այդ պայմանավորվածության թելադրանքով է եղել՝ գաղտնի պահելու ապստամբությունը դրսից՝ առաջին հերթին Լեռնահայաստանի ու ավելի կոնկրետ Նժդեհի ու այնտեղ «ծվարած» Ռուբենի կողմից կազմակերպված լինելը, քանի որ հայտնի էր դարձել, որ Մարտիրոսը նոր էր վերադարձել Լեռնահայաստանից (նա Դրոյի հրամանով ուղեկցել էր Ռուբենին՝ ապահով ու գաղտնի անցնելու Սյունիք) և նրանց կողմից պիտի որ որոշակի հանձնարարություններ ունենար:

Նույնիսկ պատմաբաններից շատերը, հետևելով հուշագրություններում շեշտվող այս դրույթին, կարևորում են միայն այն, որ Նժդեհը, նախօրոք գրավելով Վայոց Ձորը, ապահովել էր բոլշևիկյան կացնից փախչողների նահանջը, և փետրվարյան ապստամբության մեջ կարծես չեն նկատում Գարեգին Նժդեհի

---

[7] Ե. Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920թթ., Ե., 1999թ,. էջ 697

կարևոր դերը դրա ծրագրման ու նախաձեռնման մեջ, ուստի և իմիջայլոց են անդրադառնում կամ բոլորովին անտեսում են Գ. Նժդեհի վայոցձորյան և նորբայազետյան գործունեությունը:

Խմբապետ Մարտիրոսի վերջին հուշագրական տեղեկությունները, կարծում ենք իր ժամանակին քննադատվել են ոչ թե արժանահավատ չլինելու, այլ հենց որոշ գաղտնազերծումների համար: Ի մի բերելով՝ կարող ենք ասել, որ թեպետ Փետրվարյան ապստամբությունը համաժողովրդական և որոշ չափով նաև տարերային բնույթ կրեց, այնուհանդերձ, նախօրոք ծրագրված ու պլանավորված էր, և ապստամբության նախաձեռնողն ու ոգեշնչողը եղել է հենց Նժդեհը, որը, ի տարբերություն մյուս պետական գործիչների, սկզբից ևեթ սին պատրանքներ և որևէ դրական ակնկալիք չուներ բոլշևիզմից. «Նժդեհին հանդիպեցինք Տաթևում, նրա մոտ էր գտնվում նաև Յապոնը: Ռուբենի գրած նամակը հանձնեցի Նժդեհին: Երբ կարդաց շատ ուրախացավ ու բացականչեց».

-Շատ ուրախ եմ, որ Ռուբենն էլ վերջապես եկել է այն համոզման, որ Լեռնահայաստանը պետք է շարունակի իր պայքարը Խորհրդային իշխանության դեմ: Այնուհետև դառնալով ինձ՝ ասաց.

-Շուտով, սիրելի՛ Մատիրոս, շուտով, 10 օր հետո Դարալագյազ եմ ուղարկում Յապոնին: Նա կարճ ժամանակում Դարալագյազը կմաքրի Կարմիրներից և կմիացնի Լեռնահայաստանին:

Դու տեղ հասնելուդ պես կարճ ժամանակում կազմակերպիր մեր համակիր ու դժգոհ ռազմական ուժերը և այդ ապստամբ ուժերի գլուխը անցած՝ աշխատիր գրավել Երևանը և գնդակահարումներից ազատել մեր բանտարկված ընկերներին:

Ապստամբների ղեկավարի մարմինը անվանիր «Հայրենիքի փրկության կոմիտե»: Այս անունները անհրաժեշտ են. նախ՝ բոլոր դժգոհ տարրերին, առանց կուսակցական խտրության, շարժման շուրջը հավաքելու համար, երկրորդ՝ այս անունները կապացուցեն, որ ապսատամբական շարժումը կուսակցական-դաշնակցական շարժում չէ, այլ համաժողովրդական, որի պատճառով էլ գուցե կանխած կլինենք մասամբ մեր բանտարկված ընկերների գլխին կախված գնդակահարման վտանգը:

Նույնը հաստատեց նաև Յապոնը, և մենք Տաթևից ուղևորվեցինք դեպի Բազարչայ: Նժդեհն ու Յապոնը եկան մեզ ճանապարհ դնելու: Խիստ հուզիչ էր

բաժանման վարկյանը: Երկու ընկերներն էլ փաթաթվեցին ինձ և արցունքի կաթիլներով թրջեցին երեսս: Ես նրանց ողջագուրանքներից ազատվելու համար բողոքեցի.

-Ինձ թաղե՞լ եք որոշել, որ այդպես լաց եք լինում, ընկերներ:

-Չէ, Մարտիրո՛ս ջան,- հուզումով ընդհատեց Նժդեհը, մեր սկսելիք ազատագրական մեծ գործի հետ կապված հրճվանքի, ուրախության արցունքներ են: Մենք Դարալագյազը գրավելուց հետո, կփորձենք միանալ ձեզ»:

Սակայն Նժդեհի խոստումը՝ 10 օր հետո գրավել Վայոց Ձորը, հետաձգվում է ավելի պատեհ ժամանակ՝ փետրվարի 16-ին, երբ Կարմիր զորամասերի մեծ մասը գտնվում էր Վրաստանում[8]:

Եվ իսկապես, ապստամբության հաղթանակից հետո իշխանության նոր մարմինները անվանակոչվեցին հենց «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ ըստ Նժդեհի խորհրդի: Ուշագրավ է նաև, որ Խմբապետ Մարտիրոսի նախաձեռնությամբ նույնանուն կոմիտեներ էին ստեղծվել իր հայրենի Գառնում և որոշ գյուղերում մինչև Երևանի գրավումը:

ՀՓԿ նախագահ Սիմոն Վրացյանը ինքն է խոստովանում իր կրավորական ու պասիվ դերը ապստամբության նախապատրաստման գործում. «Որքան էլ պատվավոր նկատվի փետրվարի 18-ի հեղինակ լինելը, հեղինակության այդ պատիվը մեզ չի պատկանում: Փետրվարի 18-ը հեղինակեցին իրենք՝ բոլշևիկները: Վատորեն ստում են և բոլոր նրանք, որոնք ինչ-որ կապ են փնտրում փետրվարի 18-ի հեղաշրջման և «իմպերիալիստական պետությունների խարդավանքների» միջև»:

Մարտի 8-ին Նժդեհը Վայոց Ձորից մեկնում է ապստամբած և բոլշևիկյան բռնատիրական լուծը թոթափած Նոր Բայազետ գավառ՝ այնտեղից Երևան անցնելու մտադրությամբ:

---

[8] Մ. Աբրահամյան, «Իմ հիշելի հուշերը», գիրք 2, Թեհրան, 1978, էջ 28-29: Հայրենիք, Բոստոն, 1956, էջ 28

Արդյո՞ք սրանք սովորական շրջայցեր էին Լեռնահայաստանի նոր միացված գավառները, թե՝ նախօրոք պլանավորված մեծ ծրագրի հերթական քայլերն էին:

Նժդեհն իր հայտնի «Ազատ Սյունիք»-ում գրում է. «Արարատյան Հայաստանի անկումով, Զանգեզուրը ճիշտ է, որ դադարել էր ինձ համար ինքնանպատակ լինելուց: Նա այլևս նպատակ չէր, այլ՝ միջոց: Ապահովելով մեր լեռնահայության ֆիզիկական գոյությունը սովետպանիսլամական վտանգից, վճռված էր փրկել Հայաստանի հողը մահացու անդամահատությունից, իսկ հայ մտավորականությունը՝ գխովին ոչնչացումից»[9]:

Եվ այնուհետև. «Երևանի ապստամբությունը նպատակ չուներ երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել խորհրդային բանտերի դռները, ուր հոգեվարքում էր հայ մտավորականությունը: Հաջողվելով իր այդ փորձի մեջ, նա պիտի ձգտեր վերագրավել Երևանը Սյունիքից բաժանող խորհրդային գավառներից մեկը կամ երկուսը:»

Հետևաբար՝ Նժդեհի նպատակը միայն Վայոց Ձորի գրավումը չէր: Նա, գալով Վայոց Ձոր, փորձեց կազմակերպել ու առաջ շարժել հայկական ուժերը և թուրքբոլշևիկյան ուժերից մաքրել Լեռնահայաստանը Երևանից բաժանող տարածքները: Ցավոք, մեծ արդյունքներ չունեցավ: Հաջողվեց մաքրել միայն պատմականորեն Վայոց Ձորի մաս կազմող Չանախչիի շրջակայքը և Երևանից նահանջողների համար ճանապարհ բացել:

Յապոնի օգնական Մակվեցի Մեսրոպի փետրվարի 25-ի նամակը Խմբապետ Աղաբեկին նույնպես բացահայտում է, որ Փետրվարյան ապստամբությունը եղել է նախօրոք ծրագրված:

«Ամսույս 17-ին (փետրվարի), առավոտյան ժամը 6-ին Սիսիանի զորամասով, Յապոնի գլխավորությամբ, գրեթե առանց կռվի գրավեցինք Դարալագյազը: Սովետական բոլոր ուժերը մեր ձեռքում են»:

---

[9] Ե. Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920թթ., Ե., 1999թ., էջ 697

Ձեր շրջանի մասնավորապես քեզ հետ կապ հաստատելու, տեղի տաճկահայ ուժերը կազմակերպելու համար, երեկ եկա մինչև Քարագլուխ, որտեղ լսելով քո հաղթական մուտքը Ն. Բայազետ և շրջաններ՝ ուրախ ու բախտավոր եմ.

Երեկ Քեշիշքենդից մեկնելու րոպեին մասնավոր լուր առանք մերոնց կողմից Երևանը գրավելու մասին, որին չուզեցինք հավատալ: Մեր սուրհանդակը այսօր պիտի վերադառնա Երևանից և ստույգ տեղեկություն բերի:

Ամսի 27-ին Նժդեհը կլինի Քեշիշքենդում: Որոշված է մարտի 2-ին համագումար հրավիրել, որտեղ կորոշվի Դարալագյազը Մեծ Սյունիքին միացնելու խնդիրը:

Եթե դեռևս Երևանը գրավված չի, լավ կլիներ, որ համագումարին մասնակցեր ձեր պատգամավորությունը: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է, որ հատուկ սուրհանդակ ուղարկես, թե՛ ընդհանուր դրության մասին հաղորդելու մեզ, և թե՛ միևնույն ժամանակ տեղյակ պահելու մեր անելիքների մասին: Որովհետև, եթե մեր Երևանի սուրհանդակի բերած լուրերը նպաստավոր լինեն, կարող է պատահել, որ մենք շարժվենք դեպի Երևան: Այդ դեպքում նպատակահարմար կլիներ, որ շարժումը միաժամանակ լիներ և քո կողմից:

Եթե նույնիսկ մինչև այսօր Երևանը գրավված չլինի, մեր և քո ուժերը բավական են ամբողջ Հայաստանը մաքրելու մեր խելագար ու սրիկա թշնամիներից, որոնց ուժը կայանում է միմիայն ստորության ու անբարոյականության վրա:

Ստույգ աղբյուրից գիտենք, որ Հայաստանում եղած բոլոր ռուսական ուժերը հեռացել են որպես թե Վրաստանի սահմանը: Իսկ իրենց հայկական ուժերը, թշնամիները չեն կարող լինել, ինչպես փորձերը ցույց են տվել»:

Մինչև փետրվարյան ապստամբությունը սկսելը, կամ ավելի շուտ որպես դրա առաջին քայլ՝ շատերի համար անսպասելի քայլով Նժդեհի հրամանով 1921թ. փետրվարի 16-17 Սյունիքի գեներալկոմիսար, միաժամանակ Արևմտյան ճակատի հրամանատար Յապոնի հրամանատարությամբ Լեռնահայաստանի զորքերը՝ 400 հետևակ և 200 ձիավոր, Սիսիանի Բազարչայ գյուղից մտան Վայոց Ձոր և կայծակնային արագությամբ 12 օրվա ընթացքում գրավեցին ամբողջ գավառը՝ գերելով 11-րդ Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի 180-րդ գնդի առաջին գումարտակի գրեթե ողջ կազմը՝ հրամանատար Կազլովի հրամանատարությամբ՝ 500-ից ավել զինվորների ու սպաների՝ չհաշված կոմբջիջների մի քանի հարյուր զինված

անդամներին, 4 թնդանոթ, 21 գնդացիր և այլ ռազմամթերք: Ընդհարումների ընթացքում մի քանի սպաներ սպանվեցին, իսկ մյուսները գերի հանձնվեցին ու քշվեցին թիկունք: Քեշիշքենդը գրավելիս սպանվեցին պարբերաբար Զանգեզուր լրտեսության ուղարկվող սիսիանցի բոլշևիկ անգեղակոթցիները՝ Արզումանը՝ (Արկյազի Սուրբ Խաչի վանքում), բուժակ Հովսեփ Դանիելյանը, Մկրտիչ Մկրտումյանը, Հովակիմ Պողոսյանը, Բագրատ Տեր Օհանյանը, բռնակոթցի Կարապետ Ղազարյանը, ՂարաքիլսաՍիսիանցի՝ Վահան Տեր Ղազարյանը, հրամանատարի տեղակալ, սպա Բելովն իր համհարզի հետ և ուրիշներ:

Միայն կոմիսար Գրիգոր Բայթունին կարողացավ գավառի մի քանի կուսակցական գործիչների հետ տեղացիների օգնությամբ փախչել-ազատվել:

Յապոնը հիշում է. «Փետրվարի 17-ին ճանապարհորդվելով՝ կեսօրից անց հասանք Գնդեվազ, որը սպիտակ դրոշակով դիմավորեց մեզ ու իր զորամասը միացրեց մեզ հետ: Այստեղից, առանց դադար առնելու, առհամարելով այդտեղի սար ու ձորի ձյունն ու սառնամանիքը, առաջ շարժվեցինք ու հասանք Սուրբ Խաչ վանքը, ուր գիշերեցինք:

Փետրվարի 17-ի առավոտյան մի քանի ուղղությամբ առաջ անցանք և այդ օրն էլ գրավեցինք ամբողջ Դարալագյազը՝ Քեշիշքենդ կենտրոնի հետ միասին: Մեր հարձակումն այնքան արագ ու անակնկալ էր, որ Կարմիրները չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ ու հատ ու կենտ հրացան պարպելով, ստիպված եղան զենքերը վայր դնել ու անձնատու լինել: Հրամանատարներից ոմանք հնարավորություն ունեցան դեպի Շարուր փախչելու: Մնացածը, առավելապես հասարակ զինվորները, ուրախությամբ զենքերը վայր դրին: Այդ գործողության ժամանակ գերի առանք Դարալագյազի Կարմիրների շտաբի կազմը, հրամանատարներից ոմանց ու 500-ից ավել զինվոր: Մեր ձեռքն անցան լեռնային 4 թնդանոթ: իր կազմով ու ձիրով, Քեշիշքենդի, Մալիշկայի և Այնազուրի պահեստները, 21 գնդացիր, ռազմամթերք և այլն:
Դարալագյազը գրավելուն պես շրջանի մեջ հայտարարեցի պատերազմական վիճակ: Քաղաքացիական գործերը վարելու համար ընտրել տվի Շրջանային Ազգային Խորհուրդ՝ Եղիշե Իշխանյանի նախագահությամբ և նշանակեցի շրջանային կոմիսար»:

Յապոնն էլ իր հերթին է Նժդեհի մասին դժկամությամբ ու կարծես իմիջիայլոց հիշատակում. «Դարալագյազը գրավելուց 10 օր հետո Նժդեհը եկավ ու անցավ Նոր Բայազետ՝ այնտեղից Արարատյան դաշտ անցնելու համար: Սակայն Օրդաքլուի ճանապարհին Կարմիրների դիմադրությանը հանդիպելով՝ նա հետ դարձավ ու Դարալագյազում էլ կանգ չառնելով՝ գնաց կրկին Զանգեզուր»:

Այսպես, փետրվարի 28-ին Նժդեհն իր փոքրիկ զորախմբով ժամանեց Վայոց Ձոր և մեծ խանդավառությամբ ընդունվեց վայոցձորցիների կողմից:

Մարտի 3-ից 5-ը տեղի ունեցավ Դարալագյազի գյուղացիության համագումարը՝ Եղիշե Իշխանյանի գլխավորությամբ, որը Դարալագյազը հայտարարեց ինքնավար Սյունքի մի մասը: Այն իր խանդավառ ողջույնը հղեց Նժդեհին.

«Ինքնավար Սյունիքի ազատարար սպարապետ հերոս Նժդեհին.

Սիրելի սպարապետ, Դուք երկար ամիսների ընթացքում և հարազատ ՀՀ անկումից հետո Ձեր ուժեղ ձեռքում բարձր ու ամուր պահեցիք ազատ ու անկախ Հայաստանի սրբազան դրոշը, որը ծածանվում էր Սյունյաց լեռնաշխարհում, և դեպի որն ուղղված էր ամբողջ հայության ուշադրությանը: Դուք գերմարդկային ճիգեր թափելով ազատագրեցիք Զանգեզուր-Ղարաբաղը հայ դավաճանների և դրսի բռնակալ ուժերի տիրապետությունից:

Ազատագրված Վայոց Ձորի Ա գյուղացիական համագումարը, իր ողջույնն ուղղելով Ձեզ ու Ձեր զինակիցներին, ցանկանում է Ձեզ ուժ ու կորով, նույն ոգով շարունակելու հայ հայրենիքի ազատագրման ու հավաքման գործը»:

---

[10] Մ. Աբրահամյան, «Իմ հիշելի հուշերը», գիրք 2, Թեհրան, 1978, էջ 28-29: Հայրենիք, Բոստոն, 1956, էջ 28

Եզրակացություն

Գարեգին Նժդեհը, սակայն, իր էությամբ ու հոգով անմնացորդ նվիրված էր Հայաստան աշխարհին ու կարելի է ասել, թերևս սա էր պատճառը, որ անգամ սովետական իշխանությունների բազում քաղաքական ճնշումներից չընկճվելով նա երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ կամաց-կամաց հասունանում էր խորհրդային զորքերի կովկասից նոր ռազմաճակատ բացելու պահը, ձգտեց օգտվել առիթից և սկսեց ջոկատներ կազմել, որոնք կմիանային կովկասյան ռազմաճակատում գործող խորհրդային զորքերին: Այս քայլով Նժդեհը փորձեց օգտվել առիթից և ազատագրել Արևմտյան Հայաստանը Թուրքիայի լծից: Սակայն երբ նրա կազմած ջոկատը ուղարկեցին Ղրիմ, նա հասկացավ որ հույսերն ապարդյուն են և ամեն ինչ արեց ու հայ զինվորներին հետ բերեց: Պատերազմի ավարտից հետո նույնպես Նժդեհը չէր դադարում մտածել ազատագրման մասին և 1947 թվականին առաջարկեց մի ծրագիր, որով Սփյուռքում պետք է ստեղծել ռազմաքաղաքական կազմակերպություն, որի նպատակը պետք է լիներ ազատագրել Արևմտյան Հայաստանը և միացնել Խորհրդային Հայաստանին: Առաջարկության մեջ Նժդեհը հանգամանալիցորեն անդրադառնում էր այդ կազմակերպության ստեղծման՝ պատմականորեն թելադրված անհրաժեշտությանը, նրա ապագա գործունեության ձևերին, կառուցվածքին և այլն: Թեև Նժդեհի առաջարկությունը լրջորեն հետաքրքրեց Խորհրդային ղեկավարներին և մի քանի տարի շարունակ ուսումնասիրվում էր ամենատարբեր ատյաններում, այդ ու ամենայնիվ այս ծրագիրը չիրականացավ: Ընդհակառակը՝ Խորհրդային դատարանը Նժդեհին 1948 թվականին դատապարտեց 25 տարվա ազատազրկման, որից 7 տարին անցկացնելով հեռավոր Վլադիմիրում, 1955 թվականին մահացավ տեղի բանտում: Միայն տասնամյակներ անց նրա մարմինը գաղտնիաբար մաս առ մաս բերվեց և վերամփոփվեց հայրենի հողում: Միայն՝ 1992թ. մարտի 30-ին, Նժդեհը ՀՀ դատախազության կողմից արդարացվեց:

Վերջերս մեկը գրեց. «Հայրենիքն է անհատի համար, և ո՛չ թե անհատը հայրենիքի: Դա նշանակում է՝ հայրենիքը համարել միջոց, անհատը՝ նպատակ: Դա ասել է՝ երբ վտանգ կայ, թո՛ղ կործանուի հայրենիքը, միայն թե ապրի անասնահոգի անհատը: Նման հայրենասիրութեան և անհայրենասիրութեան միջև տարբերությունը բառային է միայն» ,- ասում է Գարեգինը:

Վերջերս հաճախ է տարբեր վայրերում լսվում «երկիրը երկիր չէ» արտահայտությունը: Կարծում եմ Նժդեհի վերին ասած տողերը հենց այս խոսքերի պատասխանն է: Առնվազն ուտող ու ուրացող պիտի լինի այն անձը, ով իր սեփական երկրի, իր հայրենիքի մասին նման կերպ պետք է արտահայտվի: Նման մարդիկ անգամ չեն էլ հասկանում, որ այդ կերպ նրանք հայհոյում են իրենց և բոլոր այն նախնիներին, ովքեր իրենց կյանքն են զոհել հանուն այն հողի, որի վրա այժմ ապրում է ինքը:

Այն ժողովուրդը, որն ունի հազարամյակների պատմություն և առավել հզոր է, քան Ասորիքն ու Բաբելոնը, քանզի նրանք այլևս չկան, պարզապես իրավունք չունի վերջակետ դնելու իր պատմությանը: Հարկավոր է սթափվել, հավաքել մեծ ու փոքր, ի մի գալ մեկ համընդհանուր գաղափարի շուրջ, դառնալ զորեղ մի բռունցք և պայքարել հանուն անկախության ամրապնդման, պետության հզորացման ու կայունացման համար:

Շուրջ 600 տարի պետականության բացակայությունից հետո մենք կրկին բռնեցինք անկախության ուղին: Սակայն 21-րդ դարի արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար հարկավոր է ուս ուսի տված, առյուծի նման ետ բերել փառքը, փառքը ունեցած:

Օգտագործված գրականություն

1. Овсепян Вече, Гарегин Нжде и КГБ. Воспоминания разведчика.- Ер., НОФ «Нораванк», 2007

2. Ա. Հարությունյան, Գարեգին Նժդեհի 1921թվականի Թավրիզի դատը, Ե., 2004թ., էջ 211-212

3. Առաքելյան Վ., Նժդեհ, Ե., 1989:

4. Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ. Գարեգին Նժդեհ, գրական երկեր, հատոր երկրորդ Ե., 2002

5. Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ. Գարեւին Նժդեհ, գրական երկեր, հատոր առաջին Ե., 2002

6. Ավո, Նժդեհ. Կեանքն ու գործունէութիւնը, Բեյրութ,1968:

7. Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք, հ. 2, Ե., 2002, էջ 172-173

8. Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, Ե., 2002, էջ 114

9. Գարեգին Նժդեհ. Նամականի (1920-1921), Ազգայնական ակումբ հրատ., Երևան, 2002թ.

10. ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ. ՀԱՎԱՏԱՄՔ, Գ. Նժդեհ հրատ., Երևան, 2011թ.:

11. Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ուխորհրդ ածութիւննեի, Ե., 2005:

12. Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Ե., 1991

13. Գրականության ցանկ

14. Ե. Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920 թթ., Ե., 1999, էջ 697

15. Եապոն, Յուշեր, Հայրենիք, Բոստոն, 1941, հուլիս, հ.9, էջ 116

16. Լալայան Մ., Գարեգին Նժդեհ (Կյանքը և գործունեությունը), Ե., 1995:

17. Հատընտիր. Ե., 2006:

18. Ղազախեցյան Վ., Նժդեհը Զանգեզուրում. 1920թ վերջ- 1921թ. հուլիս, Ե. 2001:

19. Մ. Աբրահամյան, իմ հիշելի հուշերը, գիրք 2, Թեհրան, 1978, էջ 28-29: Հայրենիք, Բոստոն, 1956, էջ 28

20. Մեծ գաղափար(նորահատ նյութեր), Ե., 2002: